



Ղևոնդ Ալիշան

Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց

Պաշտամունք

Ամեն մի կրոնում պաշտամունքարանը կամ տաճարը նրա հավատացյալների ժողովարանն է, որտեղ նրանք իրենց ճանաչած Աստծուն առանձին կամ միաբան նվիրում են, նախ, իրենց խոնարությունը, որ նշանակում է ճանաչել նրա գերագույն մեծությունը, իշխանությունը և իրենց վրա ունեցած երախտիքը և այս նաև բերանով խոստովանել, ինչը աղոթքն է, երգը, գովաբանությունը և այլն: Երկրորդ՝ որևէ կերպով նաև նյութական մի բան են նվիրում Աստծուն կամ աստվածներին . և սա ձոնն է, պատարագը, գոհաբերությունը, ողջակեզը և այլն: Իսկ դրանք իրենց կամ պաշտամունքավարների ձեռքով նվիրելու և կատարելու կերպը կոչվում է ծես, օրենք:

1. Առաջին կերպի մասին ոչինչ չեմ կարող ասել՝ չունենալով և ոչ մի տող մեր հեթանոս նախահայրերի աղոթական խոսքերից: Բայց ոչ մի որևէ կերպով աղոթում էին ու խնդրանքով դիմում աստվածներին, հայտնի է օտարների մասին Ս . գրքի հիշատակածներից՝ Բահադին կամ այլ կուռքերի արած աղաչանքներից, նաև Պողոս առաքյալի գրածներից և անհավատներին ու հավատացյալներին ուղղված խոսքերից:

Մեր Արտաշես Բ կենցաղասեր թագավորի մասին պատմվում է, որ փափագելով դեռ երկարաձգել աշխարհի վայելքը կամ ուրիշների իրեն վայելելը ուզելով մի նախարարի (Աբեղոյին) ուղարկեց «յԵկեղեցաց յԵրիզա, ի մեհեանն Արտեմիդայ, խնդրել ի կոոցն բժշկութիւն և բազում կեանս» (ինչը նա չտվեց . ոչինչը չէր

կարող որևէ բան տայ): Պարզ է, որ թագավոր և ծառա, հարուստ և աղքատ, եթե կրոնասեր էին, աղոթում էին յուրաքանչյուրը իր գգացած կամ իմացած կերպով: Մեր խնդիրը այդ քննելը չէ, այլ պարզվելը, թե կային արդյոք սահմանված կամ շարադրված կարգով աղոթքներ, մաղթանքներ, երգեր, օրհնություններ: Կարծում եմ՝ կային, և մեհենական մատյաններ կոչված գրքերի մի մասը բովանդակում էր այսպիսի բաներ, բայց ոչ ժողովրդի բերանով ասված աղոթքները, այլ պաշտամունքավարների կողմից ասվածները, մի մասն էլ՝ ասելու կամ լսելու կերպը կամ ծեսը՝ ձևերով կամ շարժումներով հանդերձ:

Թե այդ մատյանների մեջ ինչ սնտի ու խայտառակ բաներ կային գրված, կարող է գուշակվել ոչ միայն քրիստոնեության ծագումով դրանց ջնջվելուց, այլև մի քանի տեղ մեր հիշատակված աղթարական աղոթքներից, որոնք, թեև հետո են շարադրվել քրիստոնյաների կողմից, բայց հեթանոսական հետք ու հոտ ունեն: Հայտնի է նաև Բարդաժան աղանդավորի արածից (2-րդ դարում) որը, հայերի այդպիսի մեհենական գրքերը կարդալով, դրանց հակառակը գրեց: Այս գրվածքները կուռքերի պաշտամունքի և բաշխերի վերաբերյալ էին, և թվում է, թե դրանք գրված էին մի այնպիսի կարգով ու ոճով, որ արժանի եղան ընդդիմաբան հերքման, թեև հերքելի անձի կողմից: Մեկ այլ տեղում ևս հիշատակվում են մեհենական պատմություններ՝ որոշ չափով նման մեր եկեղեցիների դիվաններին ու կոնդակներին (ժողովրդի կողմից քյություն կոչված): Սրանից պարզ է դառնում, որ եթե մեհյաններում պահվում էին պատմական գրվածքներ, ապա որքա՛ն ավելի շատ պիտի լինեին ծիսականները:

2. Ծիսական անվամբ նկատի է առնվում պաշտամունքարանում պաշտամունքավարի ձեռքով որևէ կրոնական գործ կատարելը, ինչը սովորաբար կոչվում է արարողություն: Բայց առաջին բառի միավանկ ծես արմատը ցույց է տալիս սրա հնությունը, որն արժանի է լեզվագետների քննությանը: Մեզ անձանոթ է օտար լեզվի համահունչ բառ՝ բացի Արամագի՝ Ծես կամ Ծաս անունից (թեև հույների մոտ գ-ով հնչած՝ Չես), որ նշանակում է «կենսատու»: Հարկ էր, որ ծեսերի վարդապետության գիրքն էլ կոչվեր ծիսարան, բայց այս բառը գրքերում գործածված չէ, այլ նրա փոխարեն ասում ենք «Մաշտոց», և մեր ազգակիցներին հայտնի է այդ անվանումը: Սա ս .

Մեսրոպի անունից չի առնված և ոչ էլ 9-րդ դարում այդ գիրքը նորից կարգավորող համարված նույնանուն (Մաշտոց) կաթողիկոսից, որը հավանաբար ինքն է անունը առել գրքից, որ պարզորեն կամ թարգմանաբար կոչվում է «Օրհնություններ» կամ «Օրհնությունաբեր գիրք»: Սակայն Մաշտոցը-ը (անշուշտ, մաշտ արմատից) «Ժիսական» նշանակությամբ և սրա պես այժմ մեզ անձանոթ ծագմամբ հին և նախաքրիստոնեական բառ է, որի համար կարող է դիտվել լծորդություն պաշտ և հաշտ բառերի կրոնական իմաստների, նաև մշտիկի հետ, որով կրոնական ջրի ցողմունք է լինում, և որը, ըստ հին բառգրքի, նշանակում է «ցանիչ»: Անտարակույս է, որ ինչպես ուրիշ և գրեթե բոլոր ազգերի, այնպես էլ մեր պաշտամունքների մեջ ջուրը ցանվում ու ցրվում էր՝ իբրև թե՛ անձերին և թե՛ նվերները սրբող:

«Մաշտոց» գրքի պարզագույն անունը հիշելիս մեր առջև հատնում է մի նոր նշանավոր բառ ևս (օրհնություն), որի արմատը, թեև ուղղականը գտնված չէ, օրհն-ն է: Բայց կա հոլովված հոգնակին՝ օրհնից, և բարդություններում՝ օրհներ (ինչպես՝ ջրօրհներ և այլն): Հիշելի է, որ ըստ հին վերծանողության՝ պետք է կարդալ ոչ թե օ, յալ աւ . արհնէք: Եվ դարձյալ մի քանի բաղաձայն տառի իրար մոտ գուգադրվելը ձայնավորի անհրաժեշտությունն է ցույց տալիս, և ն տառը գուցե լինի իմաստի գորացուցիչ, ինչպես՝ ակն, հիմն և այլն: Եվ այսպես ենթադրելով՝ թերևս գուգորդվի նաև Ավեստայի լեզվում «աստված» նշանակող ահուրա բառին: Ինչպես էլ լինի, հավանական է, որ օրհնություն բառն էլ հին է և հայոց հին հավատից է:

3. Թողնելով մտայինն ու հնչականը՝ քննենք պաշտելիին ընծայվող նյութականը, ինչը կոչեցինք նվեր ընդհանուր անվամբ: Դիրքերին տրված նվերները եղել են և լինում են բազմատեսակ ու բազմազան նյութերից, որոնք շատ անգամ էլ մեհյանների մեջ կամ խորանների վրա պահվելիք պինդ նյութեր էին, ինչպես՝ մետաղյա զարդեր կամ պատկերներ: Եվ գուցե այնտեղ կախվելու պատճառով դրանք պարսկերեն բառով կոչվել են նյովար, որ նշանակում է «պարան, չվան»: Վերոհիշյալի հետ ունի՞ արդյոք առնչություն նաև Ավեստայի լեզվի հոնովեր բառը, որը նշանակում է կրակին նվիրաբերելու կամ պաշտամունքի ընթացքում ասված աղոթքը:

4. Նվիրաբերվածի ընդհանուր և այժմ սրբազանացված անուն է պատարագ-ը, և սրա՝ քրիստոնեական ծեսի մեջ ընդունվելը պարզ է դարձնում, որ հին հավատքի մեջ էլ այս էր նվիրաբերությունների ընդհանուր ու գլխավոր անունը: Այդպես է ասվում նաև Ս . գրքի մեջ: Բոլոր կրոններում նվիրաբերվածների համար ասվող բառի հատուկ նշանակությունը կարող է ճշտվել բառաբարդությունների մեջ, ինչպես՝ լիապատար, հուսապատար, և ածանցավոր բառերում, օրինակ՝ պատարուն: Բոլորն էլ նշանակում են «շատություն, լիություն», ինչպես կվայելեր նվիրել Աստծուն կամ դիքերին: Առանձին ասված կա նաև պատար սիրո (Ոսկեբերան, Մեկնություն եփեսացիների): Այս (լիության) իմաստով ևս կարելի է գուշակել, որ պատարագի նվերները ի սկզբանե ոչ թե գոհեր էին, այլ բուսական բերք, որ առատորեն մատուցում էին: Հետագայում իմաստը ընդարձակվեց ու տարածվեց բոլոր տեսակի ընծաների, նաև կենդանիների ու գոհելիների վրա . ըստ այսմ՝ գուցե կարելի լինի ենթադրել առնչություն պատարագ-ի և պատրուճակ-ի միջև, որ սովորական գոհելին էր:

5. Ս . գրքի վկայությամբ էլ (ըստ Աբելի ու Կայենի պատարագների պատմության) գիտենք, որ առաջին նվերները երկրի անշունչ բերքի հետ նաև շնչավորներ էին (կենդանիներ): Եվ որքան էլ պժգալի է բնության մի կյանք փշացնելը, լինի մորթելով, լինի արյրելով, մարդը չէր կարող այլ ձևով իրենից բոլորովին հեռացնել, իրեն զրկել այդ նվերներից, եթե ոչ ինչ-որ կերպ դրանք ոչնչացնելով: Մանավանդ իր կյանքը Աստծուն նվիրելու համար ավելի մերձավոր բան չկար, քան ուրիշ մի կյանք, այնպիսի կյանք, որ ապագա չունի, շատ թե քիչ պիտի ապրի, հետո պիտի ոչնչանա: Այդ պատճառով Աստված հին օրենքի մեջ թույլ տվեց այսպիսի նվերներ, որ կոչվում են գոհ, իսկ այրվածը՝ ողջակեզ: Մակայն ամեն բանի մեջ մոլորվող հեթանոսները անբանական կենդանիների հետ բանականին ու հոգիավորին էլ՝ իրենց նմանին՝ մարդուն էլ էին գոհում, նաև իրենք իրենց՝ անձնասպանությամբ և կամավոր ողջ-ողջ թաղվելով իրենց սիրելի կամ տիրական մեռյալի հետ: Չոհր, ինչպես անունն էլ հայնտի է դարձնում, հավանաբար հայերի մեջ է մտել սեմական ազգերից: Արաբները այն կոչում են գահայա, եբրայեցիները՝ գևախ, գնադիկներն էլ՝ քիչ նման՝ գասթրա:

6. Հաշտ բառի նվիրական իմաստը և հնդկերենից ծագելը արդեն բացատրեցինք: Այն հետագայում միացած է թվում յաճատա բառին, որ պարսկերեն յազատ-ն է, մեզանում՝ յաշտ, որի արմատը յազ-ն է, և մեր գրքերում կա անյազ, ինչպես նաև յազել, այսինքն՝ կենդանիների գոհաբերել, ինչպես որ պարսիկների յազնա և հնդիկների յաճնա անվանումները: Արվեստի լեզվի մագտիյազնա-ն, որ մեզանում գրված է մագդեզն, նշանակում է «Որմիզդի համար գոհաբերող»: Նույն անունից է ձևավորվել նրանց իզեշկյահ-ը, որ նշանակում է «պաշտամունքարան»:

7. Չոն, ձոնիք է կոչվում երբեմն նվերների մի տեսակը, և հատկապես՝ բոլոր տեսակների ընդհանրությունը: Երբեմն նշանակում է նաև պսակների նման նվիրված բաներ, երբեմն էլ՝ անձինք՝ նվիրված դիքերի պաշտամունքին կամ նրանց պահպանությանը: Ինչպես տեսանք, Անուշավան հայկազունը «նուիրեալ ի Սօսին Արամենակայ՝ որ յԱրմաւիր», որի համար էլ կոչվել էր Սոսանվեր: Մեզանում այդ անունը(ձոն) եկամուտ է թվում: Նշանակալի է (թեկուզև պատահական լինի), որ սունմագ թուրքերեն բառը ճշտորեն նշանակում է ձոնել:

Թողնելով նաև նվիրաբերվածների այլևայլ անուններ քննելը՝ նորից աչք դարձնենք նրանց նոյթերին, որոնք անունների պատճառով արդեն հիշատակվեցին: Սրանցից առաջինն ենք համարում բուսականները՝ թե՛ արմտիքը (ցորեն, գարի և այլն)՝ իբրև մարդուն հատկանշական տուրք, թե՛ ծաղիկները և գեղեցիկ տերևներով հյուսված պսակները, ինչպես Տրդատն էր հրամայում Գրիգորին, «զի Պսակս և թաւ ոստս ծառոց՝ նուէրս տարցէ բազնին Անահտական պատկերներին»:

Իսկ կենդանիներից նախ նվիրում էին նրանցից ստացվածը՝ կաթը և յուղը, բուրդը կամ գեղը, իսկ հետագայում՝ նաև նրանց մարմինը և կյանքը վերոհիշյալ գոհերի ձևով: Նվիրաբերում էին նաև (որոշ) կենդանիների ձագեր, որ երբ մեծական, գոհաբերվեն, ինչպես հիշատակեցինք Երիզայում Անահիտի աշտամունքի մասին խոսելիս . նրանց միսը բաժանվում էր քուրմերին, աղքատներին և պանդուխտ հյուրերին, իսկ մի մասն էլ այրվելով իբր միայն դիքին էր նվիրվում: Ակնհայտ է, որ գոհաբերվող այս կենդանիները սրբացվածներից կամ ուտելիներից էին՝ ոչխար, երինջ և այլն . նույնը վերաբերում է նաև թռչունների մի մասին: Թագավորները և հարուստները

քուրմերի ապրուստի համար այսպիսի գոհելի կենդանիներ նվիրաբերում էին առատորեն, այնպես որ, երբ նրանց կրոնը ջնջվեց, անսնունդ մնալով՝ Լուսավորիչին հարցրին, թե ինչպես պիտի ապրեն, քանզի այլ արվեստ չգիտեին: Սուրբն էլ հեթանոսական գոհերի փոխարեն սահմանեց քրիստոնեական ազապն ու մատաղը՝ առատ մաս հանելով քրիստոնեացած այդ քուրմերին և ապա քահանաներին: Մատաղ բառը ոմանք ստուգաբանում են որպես «աղ մատուցելով օրհնված նվեր»: Կարող է նաև հասարակ նշանակությամբ նշանակել «մատաղ կենդանի» կամ «առաջնեկ», ինչպես եբրայեցիներին էլ պատվիրված էր այդպիսիները նվիրաբերել Աստծուն կամ քահանաներին: Ս . Սահակը իր կանոնների մեջ ասում է, թե այս բանը ստուգել է իր նախնիների ավանդությամբ, և ըստ իր նախահոր (ս . Լուսավորիչի) կարգադրության՝ որոշակիորեն սահմանում է, թե կենդանու որ մասը պետք է տալ քահանային և որը՝ այլոց, որպեսզի հակառակություն և անվայել խնդիր չլինի:

Հեթանոսները, այս ընտանի և տնտեսության մեջ անհրաժեշտ կենդանիներին բավական չհամարելով, գոհաբերում էին նաև գրաստներ, ինչպես ասվում է մեր Տրդատի հոր՝ Խոսրովի մասին, որը պարսիկներին վանելուց հետո, իբր հաղթանակելով և կամենալով գոհություն հայտնել իր օգնական շաստվածներին, «սպիտակ Տլուք և սպիտակ Նոխազոք, սպիտակ Ձիովք և սպիտակ Ջորովք . . . գհայրենեացն պաշտամանցն տեղինս մեծարէր»: Այս նվիրաբերական մեծարանաների մեջ դիտելի է պաճարների ու գրաստների սպիտակ և արու լինելը՝ գուցե շաստվածների սեռին համեմատ, քանզի Անահիտին երինջ էր մատուցվում:

Հպանցիկ հիշատակեցինք նաև պժգալի մարդագոհերը՝ թե՛ կամավոր (ինչպես Արտաշեսի հուղարկավորության ժամանակ) և թե՛ օտար ձեռքով՝ ակամա և բնությանբ, ինչպես շատ անգամ հիշատակված Անճևացյաց կողմերի քարայրերում իսկապես բնավորված կամ խաբեական վիշապներին կույս աղջիկներ ու անմեղ պատանիներ մորթելով գոհաբերելը, որոնց արյունով զվարճանում էին բազինների դևերը, ինչպես ասում է պատմիչը՝ փոխանակ ասելու՝ դիվակերպ քուրմերը: Հիշատակեցինք նաև Պլուտարքոսի պատմածը Սիկիան սև քարի (Уйчйаш) առիթով, որը գործածում էին մարդագոհության

համար, իբր նրանց զարկելու հետևանքով գոհելիների արյունը հորդ էր հոսում, ինչի համար նախաստելով՝ հիշյալ Անանիա վարդապետը գրում էր . «Յուրթեալք հեթանոսական յիմարութեամբ և կաշկանդեալ կապանաք ի տնչանս սրոյ(՞) զագրելից ճենճերոց, լնուին գյատակս պղծալիցն յարկաց՝ արեամբ իւրեանց ուստերաց և դստերաց»։ Սակայն չեմ կարծում, թե մարդագոհությունը Հայաստանում այնքան հանդիսավոր եղած լինի, որքան սեմական ազգերի ու հին գաղիացիների մոտ, այլ արվել է ավելի ծածուկ, ինչպես Անձևացյաց գավառում և Բուրում եղածներն են գուշակել տալիս։

Հաշտ և զոհ

Մովորական իմաստից գատ՝ այս բառերը երբեմն նշանակում են նաև պաշտամունքի սպասքը կամ գործիքը, ինչպես ասված է մի հին գրվածքում («Եկեղեցու խորհուրդ»-ում) . «Շինուածք պղնձոյ և Մահարձանաց և Չոհից», որոնց ինչպիսին լինելն էլ արժեր գիտենալ։ Ազաթանգեղոսը զոհարանները հիշելիս բացատրում է նաև նրանց նյուն ու ազնվությունը . «Ոսկեղէն և արծաթեղէն զարդուք, և վերջատրս փողփողեալս, Նշանակապ պալարակապ մետաքսիքն, և ոսկովք Պսակօք, և արծաթի Չոհարանօք, յանօթս ցանկալիս՝ ականքք պատուականօք, ոսկով և արծաթով, հանդերձս պայծառս, և ի զարդս գեղեցիկս»։

Թեև ընդարձակորեն ասվածից որոշակիորեն չի իմացվում ինչ ձև ունենալը, բայց նկատելու արժանի են «վերջատրքն փողփողեալք»-ը՝ խույրերի ականջակալներից կախվածները, «նշանակապք»-ը՝ թվում է նույն խույրերի վրա, և «ոսկի պսակք»-ը, նաև «արծաթի զոհարանք»-ը, որ կարող են նշանակել թե՛ սեղանը, թե՛ զոհերը կամ նրանց արյունն ու մասերը դնելու անոթները։ Ս . գրքի, վկայություններում կամ տաճարների և զոհաբերությունների սպասքի այլևայլ անուններ, ինչպես՝ նվիրանոցք կամ, որ նույնն է, նվիրաք, ճաշակք, սկավառակք և այլն, որոնց պետք է որ նման լինեն և մեր հեթանոսների սպասքը, բայց քանի որ հատուկ չի հիշատակվել, կամ հիշատակումները ջնջվել են, փափագողները այդպիսիների մանրամասները կարող են գտնել օտարների դիցաբանության մեջ՝ դրանց հետ հիշելով նաև մշտիկն ու բարսմունքը։

Դիքերի պաշտամունքի մասին գրելով՝ հիշատակել ենք նաև նրանցից ոմանք տոների օրերը: Սակայն մեզ հայակալական հեթանոսական մի տոնացույց չի հասել՝ բացատրությամբ հին տոմարների մեջ հիշված մի քանի քաղղեական հիշատակների: Տօն կան տաւն բառն էլ կարելի է հայոց հին հավատքից մնացած համարել, և դրա ծագումը կամ ստուգաբանությունը՝ հետաքննելի: Դա գուցե տալ, տուրք բառերի արմատը լինի՝ ձոն-ի նման (իբրև համահունչ՝ հարևանցիորեն հիշենք արգոսցիների Հերա դիցուհու տոները, որ կոչվում էին տոնյա Tonèe):

Պարսից աղանդի հետ, իհարկե, մեր ազգակիցների մեջ էին մտել և նրանց տոների անվանումները (ինպես կրոնի կեշտ, քեշ և այլ անունները), նաև ջեշ-ը կամ ջաշ-ը, որ նշանակում է «տոն», ինչպես ասվում է Ստեփանոս Սյունեցու՝ Գերմանոսին ուղղված թղթի մեջ . «Նստեաք ի խաւարի դիցատօնակ Զաշանց հեթանոսականց»: Եվագրոսի գրվածքի մեջ էլ գրված է սխալ . «Զալիանց տօնից տարեկանց հեթանոսաց չհաւասարել»: Հին բառգիրքը ջաշանց բառը թարգմանում են «գոհ, նվեր», որ կարող են նշանակել պարսից չեսնի բառը և մեր ճաշակ-ը: Մեկ այլ բառգիրք էլ ջաշանց-ը՝ որպես անհոլով ուղղական, մեկնաբանում է որպես «դիվապաշտ» կամ «դիվանվեր»: